I
3214

2000

1694-ԱԿ

ԱՐԹՈՒՐՊԵՏՈՒԹԻՒՆ

ԳՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԻՆ ԴԱՄԱՐ

Թարգմանութիւն

Ի հայրապետութեան Տն Յովհաննէսի Կարբեցւոյ սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց

Հրամանաւ Տեառն ՊԱՂՏԱՍԱՐԻԱՆՑ Իշխանապետի Ջալալեան սրբազան Ընբ Եպիսկոպոսի և Մեծ Տարապետի Հայոց համայն Ազգաւորաց

ՎՈՒՌՈՒ

Յամի Տեառն 1853

ՅԱԳԱՐԿ

243

Իսկի մարդոյ մտքով հնարված մին հաւատք չըկայ, որ բաւական լինի խաղաղութիւն և հանգիստ տալ էն մեղաւոր մարդոյ տանջված խըղճմտանքին, որ մեղքի ծանր բեռնովն ներգացած է. և իսկի մին էլ չի կարոզ բաւական պատասխան տալ էն ամենից ծանր և հարկաւոր հարցմունքին համար, թէ ես ի՞նչ պէտք է անեմ, որ ապրիմ։

Ինչպէս մեր Տէր Յիսուսի Քրիստոսի աւետարանն կատարելապէս բաւական է էս շատ հարկաւոր բանի համար. ինչու որ՝ նա ցոյց է տալիս մեզ մեր երկնաւոր փրկչի մահը, որ մեզ համար մեռաւ և մեռնելովն կատարեալ հնարք պատրաստեց՝ էն ամէն չարիքներից մեզ ազատելոյ համար, որ մեղքիցն են դուրս եկել։ Յիսուսի Քրիստոսի

խաչն մեզ համար իբր մեր ամէն մը-
խիթարութիւնների աղբիւրն է։ Նէ
հենց սրանով Յիսուսի հաւատքն խա-
պառ ջոկված է էն ամէն ուրիշ հա-
ւատքից, որ մարդիք էս աշխարհ-
քումն դաւանումեն։

Հարկ է ամէնից առաջ էս տեղ
միտք առնել՝ որ մարդկային ազգի
փրկչի մահն, խաչի մահ է։ Յոյնքն
և հռոմայեցիքն և մին քանի ուրիշ
հին ազգեր առ հասարակ էս մահով
պատժումէին էն շատ վատ մահա-
պարտ ծառաներին, որ շատ մեծ ա-
նօրէնութեան և չարագործութեան
մէջն բռնված էին։ Այս մահս էն
ժամանակի սովորութեան պէս էնքան
ամօթալի էր, որքան որ ցաւալի
և անտանելի էր։ Պատապարտված
առաջ ծեծ էր ուտում էսպէսի դամ-
ջով, որ նորա ծայրերն շատ անգամ
երկաթի սրած չանգալներ էին կապ-
ված. և յետոյ բռնադատումէին նո-
րան որ իրան խաչը վէր առնէ տա-
նի գլուխ կարելոյ տեղն։ Այնտեղ
նորա շորերը հանումէին, և խաչ

հանելով նորա ձեռներն վերեւի կողմն մնմառումէին և ոտներն ցած կոշին. և վերջն էն խաչն կանգնացնումէին և երկրի մէջ հաստատելով պնտայնումէին։ Սնմառներն մարմնոյ փափուկ մասունքներին մէջն վեր տրվված, էն մարմնոյ ծանրութեանէն խոցերըն մեծայնելով բանումէին և նորանց անասելի ցաւալի էին անում։ Դայց էնպէս էլ շատ անգամ երկու կամ երեք օր անոյ էին կենում մինչև որ չարչարված մարդն մեռնումէր։ Յիսուսի հետ խաչված էն երկու աւազակների պուտերն ջարդվեցան, որ նորանց մարմինները շաբաթ օրումն խաչափայտին վերայ չըմընան։ Դայց երբ որ եկին Յիսուսին մօտ, և նորան մեռած տեսին, շատ զարմացան և նորա պուտերըն չըջարդեցին։ Նրանումէ թէ էն տըրտմութիւնն, որ նորա սուրբ հոգին ներգայնումէր, մա, կանց մեղքի ծանրութիւնն որ նորա վերայ դրած էր, մարմնոյ անտանելի չարչարանքներ։, և աստուծոյ պատժոյ արդարութեան

ստատկութիւնն՝ պատճառ էին, որ նորա մեռնիլն շուտով հասաւ։ Ընկարել է նորա ամէն դեղութիւններն ու չարչարանքներն պատմել և ցոյց տալ։ Ուստի սրա համար դա ազաղակեց։ Իմ աստուած, իմ աստուած, ինչո՞ւ թողիր ինձ։

Յիսուսի Պիլատոսի խաչ սաելով՝ մենք էս տեղ ոչ թէ միայակ էն փայտն ենք իմանում, որ նա դորա վերայ հոգին աւանդեց և մեռաւ, բայց էլ սաելի Յիսուսի խաչելութիւնն որ էն խաչափայտի վերայ էլաւ և նորա մահն, որ նա մեզաւորաց համար քաշեց։ Ու մահիս քարոզութիւնն Պօղոս առաքեալն խաչի խօսք է ասում։ (Ա. Կորն. Ա. 18։) Ու վարդապետութիւնս հասատաելոյ համար հաճամունք քաշիլն ասվում է Յիսուսի Պիլատոսի խաչի համար չարչարանք քաշել՝ և Պիլատոսումն էլած փրկութենումն պարծենալն՝ նորա խաչումն պարծենալն է ասվում։ (Գաղատ. Զ. 14։)

Ինչ էս քանիս վերայ կամենաս-

մենք հիմիկ մին քիչ մը միտքն դարձնենք Նայց նա էնքան հրաշալի և էնքան զարմանալի է, որ մեր գիտութիւնն և միտքն իսկի չեն կարող կատարելապէս հասնել նորա բարձրութեանն և արժանաւորութեանը։ Սրա համար ամէն ինչ որ նորա վերայ կըկարենանք ասել, շատ հեռու կըլինի նորա կատարելութենէն և փառքէն։ մենք մէնակ ջանք անենք որ էստեղ պարզ խօսքով ցոյց տանք թէ Յիսուսի Քրիստոսի խաչն է աստուածային խորհուրդների մարգարէութիւնների և խոստմունքների կատարվելն աւետարանի յատուկ էութիւն։ մեղաւորաց փրկութիւն։ մեր ամէն թշնամիների վերայ յաղթութիւն։ մեր յուսոյ հաստատութիւն։ յաւիտենական ցնծութեան հիմունքն։ աստուածային կատարելութիւնների փառաւոր յայտնութիւն։ և սրբութեանն հետևելոյ համար ամէնից զօրաւոր յորդորմունքն։

Ը.

Յիսուսի Քրիստոսի խաչն աստուածային խորհուրդների մարգարէութիւնների և խոստմունքների կատարվելն է։ Ամենատոգորմած Աստուծոյ խորհուրդները յաւիտենից յեռակ դարձած էին էն մեծ գործին վերայ, որ մեր փրկչի մահովն կատարվեցաւ։ Նա անուանված է աստուծոյ գառն որ էս աշխարհքիս ստեղծագործութեան ըսկիզբիցն մորթված է։ Հոր աստուծոյ խորհուրդներն որ մեր Տէր Յիսուս Քրիստոսով են՝ յաւիտենական են ասվում։ Հենց աստուծոյ սահմանված խորհրդովն և կանուխ գիտութեանովն հաստատված էր, որ անօրէնների ձեռքովն փայտի վերայ բեւեռած խաչվի և սպանվի (Գործ. Բ. 23։)

Քանի՞ շատ մարգարէութիւնք՝ տիպք և խոստմունք կան որ Յիսուսի Քրիստոսի խաչովն կատարվեցան հարանք ամէնքն էս մեծ գործիս մէ-

ջին՝ իբր իրանց մէջ տեղումն հաւաքված միաւորվեցան։ Աստէսիցն մինչև մաշաքիան աստուծոյ հոգին ամէն մարգարէներով առաջուց պատմեց Յիսուսի չարչարանքներն և էն փառքն որ պէտք էր նորանց ետևէն գայ։ Երկնքիցն տրվված մարգարէութիւններն որ ժամանակից ժամանակ յայտնվեցան, հենց Յիսուսի քրիստոսի խաչին վերայ էին մտիկ տալ։

Նորանով մօսէսի արարողութիւններն և օրէնքն, շուաքներն և նշաններն կատարվեցան։ Եթէ Քրիստոսի խաչելութեան լուսին չընդունենք նորանց, ապա մին ուրիշ բան չեն երևիր քայց մէնակ դատարկ և պայծառ երևօղ կարգադրութիւններ, առանց մին յատուկ նշանակութեան՝ որ իսկի աստուծոյ մեծ իմաստութեանն արժան չեն։ Ոչնչ օգուտ էր, էնքան շատ արիւն թափել ամէնմար անմեղ ստեղծվածներ կոտրել և մատաղներ անել, եթէ էն ամէնն օրինակի համար չէր կարգված, որ

մենք նորանցով սովորինք, թէ առանց Քրիստոսի արիւն թափելոյն իսկի մեզ համար մեղաց թողութիւն չէր կարող լինել։ Եւ անմեղ ստեղծվածներուն շատ մատաղներն որ անդադար պատարագվումէին, էն միայն Աշխարհիս մեծ և անարատ պատարագըն էին ցոյց տալ թէ որ Յիսուս Քրիստոսն պէտք էր մատուցանէ աստուծոյն։ Եւ մոքովս սորանց իմանալով, տեսնումենք որ ամէն մէկ կարգադրութիւն իրան յատուկ նշանակութիւնը ունէր։ Սրա համար հիմա նոր կտակարանն սովորցնումէ մեզ որ նորանց էնպէս իմանանք. որ էն նոր գաղտ. բաներուն շուաք և օրինակ են. բայց մարմինն Քրիստոսէ։ (Կոլոս. Բ. 17։) Եւ ամէն նշանների ժուռթ երկմտութիւնն ացկացաւ. և պայծառ լոյս էլաւ նորա խաչովն՝ երբ որ նա ժամանակների վերջումն մին անգամ յայտնվեցաւ՝ որ մեզքըն դէն քցէ իրան անձին պատարագովն. (Եբրայ. Թ. 26։)

Շատ երևելի տիպուածներ և ան-

ձիրք, որ հին կտակարանի մէջ յիշ-
վումեն, տիպք և նշաններ էին, որ
առաջուց Քրիստոսի գործքն և մա-
հը ցոյց տուին։ Մենք իսկի չենք
սխալվիր որ ասրանց էս մոքովը ըն-
դունենք. պատճառն որ՝ հենց աս-
տուծոյ սուրբ հոգոյն շարժված ա-
ռաքեալներն նոր կտակարանի մէջն
սովորցնումեն մեզ որ նորանց էնպէս
իմանանք։ Մելքիսեդեկի և Ահարո-
նի և նորա որդոց քահանայութիւնն
աստուծոյ որդոյ Յիսուսի Քրիստո-
սի յաւիտենական քահանայապետու-
թիւնը առաջուց էր նշանակում։
Լոն զարմանալի գործքն, որ աբ-
րահամն Իրան խսահակ որդոյն տա-
նումէր, կապումէր և սեղանի վերայ
էր դնում մատաղ անելոյ համար, Յի-
սուսի Քրիստոսի խաչոյն յաղթի մեկ-
նվումէ. ինչու որ՝ Ցերն կամեցաւ
նորան չարչարանքի մէջ դնել և նո-
րան մեր մեղքերին համար պատարագ
արաւ։

Լոն անապատի մէջն բարձրացաց
պղնձի օձն, որ էն խոցված իսրայէ-

լացող բժշկութեան համար կարգ-
վեցաւ՝ յիսուսի խաչի վերայ բարձ-
բանալըն էր նշանակում։ ինչու որ՝
հետց էնպէս էլ որդին մարդոյ բարձ-
բացաւ, որ ամէն ով որ հաւատայ նո-
րան՝ չըկորչի, բայց յաւիտենական
կեանքըն ընդունի։ (Յոհ. գ. 14.
15։) Ոչ հրէաներն՝ որ եգիպտոսից
քանանացոց երկիրն էին գնում՝ երկ-
նաւոր հացովն կերակրվեցան. բայց
յիսուսն է էն ճշմարիտ հացն, որ
երկնքից վերէ գալիս և իրան անձըն
պատարագելով աշխարհքին կեանք
է տալիս։ (Յոհ. զ. 32։) Ինչպէս ի-
րան գաւազանովն քարին զարկելով
ծարաւ իսրայէլացոց ջուր խմացրուց,
այնպէս էն քարն հետց քրիստոս ինքն էր.
(ա. Կորն. ժ. 4։) Այս՝ որ մեզ համար
աստուածային արդարութեան գաւա-
զանովն զարկվեցաւ որ մենք կեանքի
և փրկութեան ջուրըն ընդունենք
նորանից։ Յետոյ նաւեանն իսրայէ-
լացոց ժողովուրդըն տարաւ քանա-
նացոց երկիրն. և յիսուսն տանում
մեզ էն երկնաւոր հանգստութեան

և երանութեան խոստացված երկրին։

Աստուծոյ մարգարէքն որ հոգովն լուսաւորված և յափշտակված էին նոր գալու բաներըն ասելոյ համար, շատ առաջուց պատմեցին մեր փրկչի բոլոր գործքերըն։ այսինքն։ նորա հոգոյ յաւերըն և տըրտմութիւններըն, և վերջապէս էն ամէնից փառաւոր և մեծ յաղթութիւնըն, որ պիտի հեռևի։ Առաջին ժամանակներումն Աստուծոյ ժողովուրդի հաւատքն հաստատվումէր Աստուծոյ էն մխիթարող խոստմունքովն՝ թէ կնկան զաւակն օձի գլուխն կըջոջախէ։ Իսրայէլացոց առաջին նախահայրքն հաստատութեանով հաստատումէին էն խօսքին։ թէ աբրահամին խոստացած զաւակովն երկրի ամէն ազգերն պիտի օրհնվին։ Յօբն իրան չարչարանքների և ցաւերի մէջն իսկի տարակուսանք չունէր նորա համար թէ՝ իրան համար փրկիչ կար։ Յակօբն Աստուծոյ հոգովն շարժված իրան մեռնելուցն առաջ՝ ասաց էս

զարմանալի մարգարէութիւնս. թէ յուդայեցն Եշխան չի պակասիլը և ոչ առաջնորդ նորա միջեցն մինչև որ խաղաղութեան Եշխան (արքայ) գայ և նա է հեթանոսներուն յոյսն (Ծնն. խթ. 10։) Այնուհետև դանիէլ մարգարէին շատ պարզ յայտնըվեցաւ էր ժամանակն՝ որ նորանում մեսիան միջեցն պիտի վերացուի. որ ապա նորանով մեղքերն վերջանան, և անիրաւութիւններն ջնջվին, և ամպարըշտութիւններն քաւվին, և յաւիտենական արդարութիւնն գայ, և տեսիլքն և մարգարէութիւններն կնքվին, կատարվին։ (Դան. թ։)

Դաւիթ մարգարէն Յիսուսի քրիստոսի խաչելութեան ամէն որպէսութիւնքն էնպէս յայտնի պատմում որ համարեա թէ հեռից ինքն իրան աչքովն տեսած լինի նորան։ Նա շատ պարզ ցոյց է տալիս և յիշում նորա հագոց չարչարանքներըն, նորա խաչի վերայ հանած խօսքըն, և ձայնըն, էն նորա շորերի վերայ վիճակ քաշելըն, նորա ձեռների և ոտների

ծանվել իլ ըն, և էն քացախըն և լե-
ղին էլ որ խմացրին նորան։ (Ա-ղմ.
ԺԹ։)

Արդարեք Յիսուսին մին ժա-
մանակ չարչարված են ցոյց տալ խա
և Մէկէլ ժամանակն յաղթող և փա-
ռաւորված։ Որին անգամ նորա խո-
նարհութեան համար են խօսում և
Մէկէլ անգամն նորա մեծ փառաւո-
րութեան համար։ Որանք ցոյց են
տալ խ նորան, որ դա է էն աստղն,
որ Յակոբից պիտի դուրս գայ. և
էն գաւազանն որ Իսրայէլի արմատից
ը պիտի բուսնէ. ցոյց են տալ խ
նորան, թէ նա է ուխտի հրեշտակն,
և հեթանոսների ցանկութիւնն. որ
իրան տաճարն պիտի գայ։ Որանք
նորան թագաւոր են ասում որ ար-
դարութեանով կը թագաւորէ, որ նո-
րա իշխանութիւնն աշխարհքի մին
կողմից մինչև Մէկէլ կողմն պիտի
փռվի, որ նորա թագաւորութիւնն
պիտի յաւիտեան կենայ և նորա իշ-
խանութեանն վերջ չը լինի։ Մեծ
և աստուածային ուրախութեանով ա-

զաղակուանն Թէ. մանուկ ծնեալ մեզ
և որդի տրվեալ մեզ, որ նոքա իշ
խանութիւնն իրան ուսերին վերայ
էլան. և նորա անունն կոչվեցաւ
մեծ խորհուրդի հրեշտակ՝ զարմա-
նալի խորհրդակից՝ աստուած՝ հզօր՝
իշխան՝ խաղաղութեան Թագաւոր՝
և նոր եկող աշխարհքին հայր (Ես-
այ. Լ. 6։) Նայց հետց նորան էլ
ցոյց են տալիս՝ որ ինքն իրան. ասում
է՝ որդն և ոչ մարդ. մարդկանց
նախատինք և ժողովուրդի անարգանք
որ զոր տեղն ասվում է. որ մարդ-
կանցից անարգվում է և ոչ ինչ է
հ. մարվում. մարդ որ տրամութիւն-
ներին և ցաւերի մէջն կայ. որ կեն-
դանեաց երկրից վեր կալվաւ Ն.
հան Պրիստոսի խաչն յոյժ մեկնում
է և հ ասում է։ ամէն մարդ-
գալէութիւններաւ։

Ր

Պրիստոսի խաչն աւետարա-
նի յատուկ էութիւնն և զօրութիւնն է։ Պատճառն որ՝ աւետա-

բանն մին ուրիշ բան չէ, քայց երկնքիցն վերը բերած ուրախացնող աւետիք էն զղջմութեան, խաղաղութեան, և փրկութեան համար, որ աստուծոյ որդոյ չարչարանքներովն և մահովն մեզ համար պատրաստված է։ Աւետարանական պատմութեան էութիւնն ի՞նչ է՝ եթէ ոչ Յիսուսի Քրիստոսի խաչելութիւնն։ Ի՞նչ են պատմում էն չորս աւետարանիչներն. հետց էն մին պատմութիւնը են պատմում որ Քրիստոսի խաչի համար է, և էն Աշխարհութենովն աւետարան է կոչվում։ Ամէն մէկ բան հաստատվում է երկու կամ երեք վկաների բերանով։ Այց աստուած իրան մեծ զղջմութենովն սուրբ հոգով շարժված չորս մարդ տուաւ մեզ՝ որ Յիսուսի Քրիստոսի ծնունդին, վարքերին, գործերին, վարդապետութիւնին, հրաշքներին, և մահին պատմեն մեզ։ Նորանք պատմումեն մեզ, ինչ որ Յիսուս երկրի վերայ արաւ և քարոզեց. ինչ նեղութիւն և չարչարանք որ նա քաշեց

ՅԱՅՑ ԿԱՅ

խաւարի իշխանէին, անօրէն մարդկանց ձեռամբ, և աստուծոյ արդարութիւն ստանալութեանմամբ։ Որովհետև յայտնուեան մեզ, թէ նա վերջն ինչպէս դատապարտվեցաւ և խաչվեցաւ, էն վկայութեան համար որ աստուածային ճշմարտութեան համար վկայեց. թէ ինքն է աստուծոյ միածին որդին, և թէ նորան վայել է հենց էն աստուածային վարքն և երկրպագութիւնն որ հօր աստուծոյ պէտք է տանք։

Աւետարանի վարդապետութիւնն խաչի վարդապետութիւն է։ Ինչ պօտոս առաքեալն որ Քրիստոսից ընտրված անէն ազգերի մէջ աւետարանի վկայ էր՝ էս ճշմարտութիւնը մեծ համարձակութեամբ հաստատում էր և ասում։ Ես միտքս չէի դրած մին ուրիշ բան գտնել ձեր միջումդ՝ բայց միայն Յիսուս Քրիստոսին՝ և նորան խաչված։ (Ա. Կորն. Բ. 2։) Յիսուսի Քրիստոսի մահն, որ նա մեր մեղաց և անօրէնութեան համար քաշեց՝ աւետարանի կեանք է։ Ամ-

լոր աւետարանի Աշխարհութիւններն
հետց էս վարդապետութենումն են
հաւաքված, մինչև որ բոլոր սուրբ
վարդապետութեան մէջն իսկի մին
բան չըկայ, որ Քրիստոսի խաչիցն
կախված չըլինի։ մեր յաւիտենա-
կան կեանք ստանալոյ համար ընտրը-
վինք, մեր դուր ծավիլն, մեր հա-
ւատքի մէջ կանչվիլն, մեր արդա-
րանալն, մեր աստուծոյ համար որ-
դեգիր լինիլն, մեր սրբվիլն, մեր
հաւատքի և սրբութեան մէջ հաս-
տատ մնալն, և վերջն՝ յաւիտենական
երանութեան մասնակից լինիլն՝ էս
ամէնա սերտ և պինդ կախված է մեր
մեղաց էն քաւութենիցն որ Քրիս-
տոսն խաչի մահվամբ մեզ համար պատ-
րաստեց և կատարեց։ Ապա եթէ էս
հիմունքըս միջիցն վեր առնենք, ա-
պա ամէնն, որ դուրս վերոյ շինված
է՝ վէր կընկնի և իսկի ոչինչ յու-
սոյ հաստատութիւն չի մնալ մեզ
համար։

Գ.

Յիսուսի Քրիստոսի խաչն մեզ աւուրցս փրկութիւնն է։ Աւետարանն էնպէսի վարդապետութիւն է, որ փառաւորումէ աստուծոյն՝ գոբանով որ բարի է անում մարդկանց. էնպէսի ուսմունք՝ որ անչափ բարի է գործում, և անչափ քաղցր և սիրելի է։ Նա ունայն շափաղներով մեր աչքերը չի կուրացնում։ ինչպէս որ էն լուսաւոր բաներն, որ հաւայի մէջ շուտով երևումեն և անց կենումն։ Այլ չի վախացնում մեզ ահաւոր բոցերով էն զարմանալի հագվաւոր աստղներին պէս. որ երկնքումն դուրս եկն գալիս և մեզ համար ոչմարիտ օգուտ չեն բերում։ բայց նա շատ առատութեամբ ամէնից մեծ օգուտ և բարիք է բերում մեզ վերայ. երկնքի արեգակին նմանն, որ իրան շափաղներովն լոյս և կեանք և ուրախութիւն է փռում ամէն տեղ. ինչու որ՝ աւետարանի ձեռովն ամէն

հաւատացեալներն էնպէսի կատարեալ երանութեան մէջ կըհասնեն, որ շատ աւելի քաղցր և փառաւոր է, քան թէ էն որ ադամայ ձեռքին կորցրինք։

Ա. Սատանի գլխաւոր բանն մարդոյ փրկութիւնն է։ Կա որ էս մեծ գործս կատարում՝ փրկիչ է ամենակարող փրկիչ է. որ եկաւ որ մեզ ազատ անէ էն նոր գալու բարկութենից. և մեզ հա՛ է մեղաց և խեղճութեան խոր անդունդից, որ նորա մէջ ընկած ենք, և վերջն՝ որ մեզ յաւիտենական և ամէնից փառաւոր երանութեան բնակարանն տանէ։ Կա էս ամէնը կատարեց ոչ թէ մէնակ իրան աստուածային վարդապետութեանովն, որ սովորցրուց, և իրան վարքի պայծառ օրինակովն, որ մեր առաջին դրաւ. բայց մահաւանդ էն մահովն, որ մեր մեղաց համար քաշեց։

Ա. Աստուածային Աշմարտութեան նոր գրքերն յայտնի ցոյց են տալիս՝ թէ մարդկանց ազգն կորստի և ապակա-

նութեան մէջ վէր ընկած է. բայց Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ որ կորածներն փրկէ, և սրա համար մեր մեղքերն իրան մահուն խաչափայտին վերայ բարձրացրուց։ (ա. Պետ. բ. 24։) Նա վ իրաւորվեցաւ մեր մեղաց համար, և պատժվեցաւ մեր անօրէնութեանց համար, արդարն անարդարների տեղն չարչարվեցաւ, մեր պատիժն նորա վերայ կար, որ մենք խաղաղութիւն ունենանք. որ մենք նորա խոցերովն բժշկվ ինք և նորա մահովն յաւիտենական կեանք ընդունենք։ (Ն-ռոյ. ծգ։)

Նա բանս ցոյց է տալիս՝ թէ ինչպէս պիտի իմանանք էն ամէնն որ սուրբ գրքերի մէջն փրկչի մեծ փառաւորութեան համար ասված է մեղ։ Նա կերպարանքով մարդոյ պէս գրուվաւ. բայց դա էլ խակի յափշտակութիւն չըհամարեց այսինքն. իրան արդար իրաւունքներն աւելի մեծ և բարձր բան չըհամարեց Աստուծոյն հաւասար լինելն։ թէ և նա ամբշ-

մարիտ մարդ էր, որ կարոշանայ չարչարել և մեռնիլը բայց էնպէս էլ հեռից դորանում բնակված էր աստուածութեան ամէն լիութիւնն մարմնապէս։ (Կոլոս. Բ. 9։) Այս հօր հետ մի է՝ էութիւնով և յատկութիւնց կատարելութիւնով։ Այս թէ որ Յիսուսի Քրիստոսի մահն բաւական չէր, որ մեզայ համար կատարեալ քաւութիւն լինի, էլ ի՞նչ հարկաւոր էր որ աստուած երևի մարմնով։ Կամ թէ նչ հարկաւոր էր, որ նա որ փրկումէ մեզ, էմմանուէլ լինի այսինքն՝ աստուած մեզ հետ։ Աստուած մեր բնութեան մէջ բնակված։ Լաւ կարելի էր որ հրեշտակ երկնքից վէր եկած՝ մեր ստեղծողի կամքն սովորցնումէ մեզ և գործքով մէն բարի օրինակ ցոյց տայ մեզ։ Ամ. հենց մեզ նման մարդ էլ կարոշ էր էս երկու բանը կատարել։ Բայց ոչ հրեշտակ և ոչ մարդ կարոշ էր իրան մահվանից մեր մեղքի քաւութիւնը կատարել։ Այս Քրիստոսի աստուածութիւնն՝ և մեր մեղայ քա-

ութիւնն՝ որ նա կատարեց. ամէնից պէտք իրար հետ միաւորված են։ Ամէն ով որ նորա աստուածութիւնն ուրանում՝ նա էլ նորա քաւութիւնը պէտք է ուրանայ։ Պատճառն որ՝ փրկչի աստուածութիւնն միակ էն է՝ որ նորա պատարագը զօրաւոր և քաւական է անում։

Խեղճութիւն և կորուստ հասատատ հեռևումն մեղքին. մեղքի պաշարն մահ է, և իբր արժանի և արդար հատուցումն նորա եռևէն է գալիս։ Ապա ի՞նչ բան կայ որ փրկէ մեզ էն յաւիտենական կորուստից՝ որ մեզ վերայ պիտի գայ։ Ասեզանում՝ իսկի մին բան և իսկի մին հնարք չը՛կայ, բայց միակ էն հնարքն, որ աստուած առաջուց կարգեց և պատրաստեց։ Ի՞նչ կայ՝ որ ազատէ մեզ էն յաւիտենական պատժից՝ որ մենք նորան արժանի էլանք, եթէ ոչ միմիայն Ընբիտասի փրկութիւնն։ Այ՝ եր փրկիչն ասաց Նիկոդիմոսին, թէ ինքն հենց նրա համար խաչի վերայ պիտի բարձրանայ, որ ամէն ով որ իրան հաւա-

սատայ՝ չըկորչվի Աստուծ՝ չէ՞ որ Յիսուսի Քրիստոսի խաչն էն է՝ որ փրկումէ մեզ կորուստից։ Ինչ՞ որ խաչված Յիսուսն է դա, որ ազատումէ մեզ յաւիտենական ոգորմելութենից և տանջանքից։ Այդպա ամէն ով որ սրա համար մտածումէ, ինչպէս կարելի է որ նա չըզարմանայ և էնքան զարմանալի և էնքան մեծ գործոյ համար փառք և գոհութիւն չըտայ աստուծոյն։

Յիսուսի Քրիստոսի խաչն հաշտացնումէ մեզ աստուծոյ հետ։ դա շինումէ և հաստատումէ մեր խաղաղութիւնը նորա հետ։ Այ էն մեծ և ահաւոր դատաւորի բարկութիւնը փոխումէ բարեկամութիւն և ողորմութիւն։ պատճառն որ՝ մեր անօրէնութեանց համար կատարելապէս վճարումէ։ Որա վճարելովն աստուծոյ ահաւոր արդարութիւնն՝ քաղցրութիւն էլաւ և հաւան է կենում էն ամէնին որ հաւատումէ Յիսուս Քրիստոսին։ Արամեռաւ դա խաղաղութիւն արաւ իրան խաչի արիւ-

նովն։ (Կորն. ա. 20։) Նա ամէն իրաւունքով և ճշմարտութեանով մեր խաղաղութիւն է ստուանվում։ (Եփես. բ. 14։) և աստուածային յայտնութիւնն հաւատացնում է մեզ՝ թէ աստուած էր էն, որ Քրիստոսովն աշխարհքըս հաշտացրուց իրան հետ և նորանց մեղքերըն չըհամարեց նորանց։ (բ. Կորն. Ե. 19։) Նորա խաչի ձեռովն մենք հիմիկ վայելումենք Աստուծոյ շնորհքըն, որ շատ աւելի լաւ և քաղցը է քան թէ կեանքն։ Աստուծոյ սէրն յայտնված է մեզ վերայ մեր տէր Յիսուսի քրիստոսի ձեռովն։

Յիսուսի Քրիստոսի խաչն ընծայում է մեզ մեր հոգևոր կեանքն։ Որ փրկչի մեզ համար մեռնելովն մենք վեր ենք կենում մեր հոգևոր մահից՝ որ մեղքերումն և յանցանքներումն մեռած էինք։ Նորա մահն նրա համար էր, որ մենք աստուծոյ համար կենդանի լինինք, որ աստուածային կեանք տրվի մեզ մեր կենդանի գլուխ Քրիստոսից։ Նա

ինքն վկայումէ, թէ ես նրա համար եկի՝ որ կեանք ունենան։ (Յոհ. ժ։)
Նորա մեզ համար մեռնելովն կենդանացուցչ հոգին է ուղարկվում մեր սրտերըն, որ նա աստուածային գիտութիւն, աւետարանական ապաշխարութիւն, կենդանի հաւատք, սուրբ սէր և հոգևոր ուրախութիւն ընծայէ մեզ։ Ամէն ինչ որ քրիստոնէական հաւատքովն ունինք և ենք, աստուածանից ունինք և ենք, Յիսուսի Քրիստոսի ձեռովն։ Իբր նորա մահուան պտուղներն։ Նա աստուածանից մեզ համար ոչ միայն իմաստութիւն և արդարութիւն եղաւ, բայց էլ սրբութիւն։ Եթէ մենք կենդանացած ենք Քրիստոսովն, նորա հոգովն ենք կենդանացած, և եթէ բժշկված ենք, նորա խոցերովն ենք բժշկված։

Յիսուսի Քրիստոսի խաչն ընծայումէ մեզ մեղաց թողութիւն, և արդարութիւն։ Նակի մեղայ թողութիւն չըկայ, բայց միայն նոր անարատ արիւն թափվելովն։ Ինքն անհամար մեղքերով և յանցանքներով

պարտական ենք։ և տարանց մեկեցն էլ իսկի մին բան չի կարող ազատել մեզ։ բայց մեկնակ Յիսուսի Քրիստոսի խաչն։ Բայց Քրիստոսի մահն ենքան հեռու հեռացնում մեզանից մեր անօրէնութիւնները։ ինչքան որ արևելքն հեռու է արևմտից։ Յիսուսի Քրիստոսի արիւնն սրբում մեզ ամէն մեղքից։ ամէն ով որ հաւատում նորան։ ազատ և կատարեալ թողութիւն կըստանայ նորանով։ Մեղքն դատաստանի օրումն չի կարենալ նորա դէմ վեր կենալ։ ինչու որ խսպառ ջնջված է։ իբր թէ իսկի մին ժամանակ էլած չըլներ։ և հաստատ էլ գիտումենք որ յաւիտեան իսկի մին ժամանակ էլ չի յիշվիլ նորա դէմ։

Քրիստոսի խաչն ազատում մեզ էն սուրբ օրէնքի անէծքից՝ որ մեր մեղքերովն քանդեցինք։ Նրթէ Աստուծոյ որդոյն հաւատումենք։ ապա օրէնքն մեզ իսկի մեղադրանքով չի վախացնում։ ինչու որ՝ մեր փրկիչն և միջնորդն՝ էն ահաւոր անէծքն

և պատիժն որ մենք արաժնի էլանք նորան, ինքն իրան վերայ առաւ և քաշեց՝ որ մեզ նորանից ազատէ։ Այլ ի՞նչ ուրիշ միտք կարենայ լինել էն ամէնից ուրախացնող և մխիթարող խօսքերուն, թէ Քրիստոս գնեց մեզ օրէնքի անէծքիցն՝ ինքն մեզ համար անէծք լինելով։ (Գաղատ. Գ։) Սրա համար իսկի հիմիկ դատապարտութիւն չըկայ նորանց համար որ Քրիստոս Յիսուսն են։ (Հռոմ. Ը.) նորանք ձրի և մուքտայ արդարացած են նորա արիւնովն։ էնպէս արդարացած՝ որ իսկի մեղադրանք չըկայ նորանց համար։ քայց Քրիստոսովն կատարեալ համարվումն և իսկի մին մեղքի կեղտոտութիւն չի երևում նորանցում ամենասուրբ աստուծոյ աջաց առաջին։ Յիսուսի Քրիստոսի արդարութիւնն ծածկումէ նորանց և նորանց ամէն մերկութիւնը և գէշութիւնը։ և նորանց արդար է շինում։ ինչպէս որ նա ինքն արդարէ։ Ո՛վ զարմանալի շնորհք։ Ո՞ր լեզու

կարողէ պատմել. և ՝ի՛ր սիրտ կարող է բաւական իմանալ սորա աշխուութիւնը։

Քրիստոսի խաչն մեզ համար երկնաւոր դրախտի դուռն բաց է անում՝ որ մտնենք նորա մէջ։ Ինչպէս որ մենք չենք կարող յաւիտենական կեանքն կորուսանից պրծնել բացց միայն Յիսուսի քաւութեանովն՝ հենց էնպէս էլ իսկի չենք կարող երկնաւոր երանութեան տեղն մտնել և յաւիտենական ուրախութիւնը վայելել բացց միայն մեր փրկչի խաչովն։ Ա՜տքներդ առէք՝ ո՞վ սիրելի եղբարք էն երկնաւոր ժառանգութեան երանութիւնը. մտածեցէք թէ քանի՞ մեծ և փառաւոր՝ քանի՞ հաստատուն և մխիթարող կըլինի նա յաւիտեան. և յիշեցէք թէ էն ամէնն աստուածանից ընծայի պէս կըտրվվի մեզ Յիսուսի Քրիստոսի ձեռովն։ Նրայովն փրկված է յաւիտենական փրկութեանով. փրկված է Տէրի ձեռովն։ Էն սրբերն որ հիմիկ փառքի մէջ բնակվումեն՝ յաղթեցին գառի

արիւնովն. (Յոյան. ԺԳ.) Նորանք իրանց շորերըն լուացին և սպիտակացրին հենց էն գառի արիւնովն. և նրա համար աստուծոյ աթոռի առաջին են. (Յոյան. Է.) հենց էս պատճառովս էլ ամէնքն մին ձայնով օրհնութիւն են տալիս գառին և աստուծոն. արժանի ես՝ որ մեծութիւն և իմաստութիւն և պատիւ և փառք և օրհնութիւն առնես. ինչու որ՝ մորթվեցար և քո արիւնովդ մեզ գնեցիր Աստուծոյ համար (Յոյան. Ե։)

Դայց էն պտուղներն որ մեր փըրկչի խաչից դուրս են գալի՝ անհամար են որ իսկի մինն չի կարօղ պատմել։ Սրա համար բաւական կըլինի մեզ համար՝ որ մէնակ մին քանիսըն էլ առաջի դնենք էստեղ։

Դ.

Յիսուսի Քրիստոսի խաչն մեր յաղթութիւն է մեր թշնամիներին վերայ։ Որա խաչն խա-

փանեց նորան, որ մահի իշխանութիւնը ունէր, այսինքն սատանային գերի արաւ գերութիւնը և յաղթեց խաւարի իշխանութեանն (Եբրայ. Բ. 14։ Եփես. Դ. 10։) Յիսուս Քրիստոս խաչին վերայ յաղթեց և թալանեց գերութիւններին և իշխանութիւններին։ Թէ և նորանց դեռ մին քանի ժամանակ թոյլ է տրվվում։ որ տրտմացնեն և անհանգիստ անեն մեզ, բայց խաղաղութեան աստուածն շուտով կը խորտակէ սատանային և նորա հրեշտակների ժողովքին մեր ոտաց տակն։

Մեր հին մարդն խաչված է Քրիստոսի հետ, որ մեզաց մարմին խափանվի։ Ահա անփոփոխելի վճիռ կտրվեցաւ, որ մեղքն չի պիտի տիրե ձեզ վերայ. պատճառն որ՝ օրէնքի ներքև չէք, բայց շնորհքի ներքևն էք։ (Հռոմ. Զ. 14։) Պօղոս առաքեալն իրան տկարութիւնը իմանալով ասումէր։ Ես մին խեղճալի մարդ եմ, ո՞վ կազատեցնէ ինձ էս մահի մարմնից։ Բայց Քրիստոսի

մեծ և փառաւոր յաղթութեանն մը-
տիկ տալով շուտով իրան տրտմու-
թիւնը ուրախութիւն դարձրուց, և
աղաղակեց. աստուծոյ շնորհքն մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռամբ
կապրեցնէ ինձ։ (Հռովմայեցւոց. Է.
24. 25։)

Յիսուսի Քրիստոսի խաչն ազա-
տումէ մեզ էս չար և մեղքով լը-
ցված աշխարհքիցս, և նորա ամէն
գայթակղութիւններից, թաքնե-
րից և նեղութիւններից։ Որ աս-
տուածային փրկիչն իրան մահուամբ
կատարեց էս ազատութիւնը։ Հենց
սրա համար պօղոս առաքեալն Քրի-
ստոսի խաչը ամէնից պատուա-
կան է համարում և ասում։ թէ
Քրիստոսի խաչովն աշխարհքն ինձ
համար խաչված է, և ես էլ աշ-
խարհքին համար։ (Գաղատ. Զ։)

Որարդոյ յետին թշնամի մահն, և
խաւար գերեզմանն, որ նորանից ա-
մէն մահկանացու մարդիք վախենում
են՝ Յիսուսի Քրիստոսի խաչովն
յաղթվեցան։ Թէ և մահի ահաւոր

կերպարանքն դեռ կայ՝ բայց նորա ծակոտն կոտրված է. պատճառն որ՝ երբ որ մեղքի քաւութիւնն կատարվեցաւ՝ հենց էն ժամանակն մահի սուրն և դէնքն կոտրվեցաւ։ Սրա համար թողութիւն գտած մեղաւորն կարող է հիմիկ համարձակ ասել. ով մահ. ո՞ր տեղ է քո ծակոշդ. ով գերեզման, ո՞ր տեղ է քո յաղթութիւնն բայց շնորհակալութիւն լինի աստուծոյն, որ մեզ յաղթութիւն տուաւ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռովն։ (Ա. Կորն. ԺԵ։) Հիմիկ էն ահաւոր մահն Քրիստոսի խաչովն ուրախութեան պատճառ է լուս

Հիմիկ մեռնելն մեզ համար շահ է։ Հիմիկ գերեզմանն մեր մահկանացու մարմնոյ համար հանգստութեան տեղ է մինչև յարութիւն մեծ օրն լուսանայ։

Ն.

Յիսուսի Քրիստոսի խաչն մեր յուսոյ հաստատութիւն է։ Կոն մին քանի մարդիք՝ որ կարծումեն և սովորցնումեն թէ պէտք է

որ մեր յոյսն մեր սուրբ և բարե-
գործ կեանքի վերայ հաստատենք.
բայց նորանց եղպէս խօսիլն յայտնի
ցոյց է տալիս, որ նորանք իրանց
անձնեերըն չեմ ճանաչում։ Պատձա-
ռըն որ՝ մեղաւոր մարդն՝ որ լուսա-
ւորված է և իրան մեղաց ծանրու-
թեան տակն վախով լցված է, ինչ-
պէս կարող է իրան բարեգործու-
թեան վերայ իրան յուսոյ հիմըն դը-
նիլ։ Որա աչքի առաջին հաղար
հազարաւոր անհնազանդութիւնները
և մեղքեր են երևում և վեր կե-
նում, որ ինքն գործեց։ Որանց
տեսնելով իրաւի պէտք էր որ խա-
պառ վեր ընկնի կատարեալ յուսա-
հատութեան մէջ, թէ որ իրան յու-
սոյ ուրիշ հաստատութիւն չունենար.
բայց միայն օրէնքի գործքերըն։ Ոչ
իսկի մին ուրիշ պինդ հիմն և հաս-
տատութիւն չըկայ, բայց միայն էն՝
որ մեղքերըն ջնջում է, անէծքըն
վեր է առնում, արդարութիւն է
տալիս, Աստուծոյ հետ խաղաղու-
թիւն է լինում, և երկնաւոր աբ-

քայութիւնն մանելոյ համար հաստատ իրաւունք է տալիս։ Այս մի միայն Յիսուսի Քրիստոսի խաչն, ինչպէս որ տեսինք՝ էս ամէնը տալիս է և սրա համար Աշմարիտ յուսոյ անշարժ հիմն և հաստատութիւնն է։ Այն յոյսն, որ նորա վերայ հաստատված է՝ Աշմարիտ մխիթարութեամբ լիքն և անշարժելի է։ Այ մի միայն Յիսուս Քրիստոս է հաճատացեալ մեղաւորի հաստատ յոյսն և նորանից ջոկ ուրիշ հիմունք ոչ ոք չի կարող դնել քան թէ էն՝ որ դրված է, որ է Յիսուս Քրիստոսն։ (ա. Կորն. գ.) Այ մեղաւոր մարդոյ խռովված և խառնըված խղճմտանքն խակի հանգիստ և խաղաղութիւն չի գտնում, բայց միայն էն կատարեալ քաւութեան մէջն, որ փրկիչն պատրաստեց։ Ուսաւորված միտքն և սիրտն չի կարող մին ուրիշ հաստատ յոյս ստանալ։ բայց միայն էս աղբիւրի մէջն։ Թէ մենք հաւատումենք Յիսուսի Քրիստոսի շնորհքովն փրկվիլ (Գործք. ԺԵ.)

Օ.

Յիսուսի Քրիստոսի խաչն մեր հոգևոր ուրախութեան և ցնծութեան հաստատութիւնն է։ Առանց նորան, ի՞նչ բան կըկարենար մեր ուրախութիւն լինիլ Աստուծոյ բաժակն է նա որ ամէն մէկ բարի խորհուրդ կատարէ մեզ համար։ Նա հեռացնում է ամէն չարիքները և հաստատում ամէն բարի բաները։ Քրիստոնեան խաչովն ոչ միայն յոյս ունի Աստուծոյ վերայ, բայց էլ մխիթարութիւն և ուրախութիւն և էնպէս ուրախութիւն որ ժամանակից ժամանակ ամէնից քաշցը և փառաւոր ցնծութեանով նորա բոլոր սիրտն և էութիւնն լցնում է։

Եթէ հարցնես թէ էս ամէնս ինչ վերայ է հաստատված. պօղոս առաքեալն պատասխան է տալիս. թէ աստուծով ենք պարծենում մեր տէր Յիսուսի Քրիստոսի ձեռնովն՝ որ հենց նորանով էլ հաշտութիւնը

ընդունեցինք։ (Հռովմ. Ե.) և էս պարծանքըս էլ հենց իրան օրինակովն ցույց է տալիս, որ ասումէ. ինձ քաջ լիցի պարծենալը բայց միայն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խաչովն և էս ասելով կամենումէ իմացնել մեզ. թէ Քրիստոսի խաչն իմ ամէնից մեծ մխիթարութեան հաստատութիւնն իմ ուրախութեան և էլ իմ պարծանքի պատճառն է. Ի՞նչ միայն խաչված փրկչի քաւօղ պատարագն իմ ամէն պարծանքն է։ Ա՛յս ոչ միայն ամէն ժամանակ իմ զօրութիւն է, բայց էլ իմ սիրտըս անփոփոխելի ուրախութենով լցնումէ։

Լ.

Յիսուսի Քրիստոսի խաչն աստուծոյ յաւակութիւնները և նորա կատարելութիւնները յայտնումէ մեզ իրատց ամէն փառքումն։ Խաչն ոչ մէնակ մխիթարութիւն է տալիս մարդոյն, բայց էլ ամէնից բարձր փառք է ընծայում Աստուծոյ։ պատճառն որ՝ ստ-

բանում տեսնումենք, որ արդար և ամենասուրբ աստուածն երբ որ իրան խորհրդովն հաստատեց իրան սէրըն և անսահման ողորմութիւնըն ցոյց տալ մարդոյն։ Իսկի չըկամեցաւ մին ուրիշ կերպով կատարել էս գործըս, բայց միայն էն Հանապարհովն որ կարող էր իրան ամենասուրբ օրէնքի հաստատութիւնն և փառքըն յաւիտեան յայտնել։ որ նորանով իրան էութեան սրբութիւնըն և իրան ահ տուչ հրամանի անփոփոխութիւնըն ցոյց տայ։

Մէն տեղ տեսնումենք մենք և իմանումենք որ ամենաբարձր աստուածն ամենից խնայուն է։ պատճառն որ՝ նորա խնայութիւնըն նորա ամէն ստեղծվածների մէջն փայլում է։ (Հաւ. ա. 19։) բայց իսկի մին բանով էն զարմանալ ի խնայուելիւնն էնքան յայտնի և պայծառ չի երևեցաւ, ինչպէս որ Յն Վնրբիստոսի խաչովն Վնանի զարմանալի էր էն հնարքն՝ որ մարդոյ փրկութեան համար, ողորմութիւնըն և

արդարութիւնը իրար հետ խապտ-
համաձայն էր անում և ամէն մէկի
ինդիրքը և իրաւունքը կատարե-
լապէս կատարում՝ երկուսին էլ
լցնում՝ բարձրացնում՝ և փառա-
ւորում՝ ինչպէս որ նորանով ողոր-
մութիւն և ճշմարտութիւն իրար
պատահում։ և արդարութիւն և
խաղաղութիւն իրար համբուրում։
(Սաղմ. ձդ. 11։) Թէ որ մեղաւորն
դատապարտված լինէր էն սատանկ
պատժի չափովն, որ նորան արժան
էլաւ, ապա ողորմութիւն փառքն կորած
կը լինէր։ և մէկէլ կողմանէ՝ եթէ
մեղաւորն մեղաց թողութիւն ստացած
լինէր առանց պատիժ քաշելոյ թէ
իրան կամ թէ իրան միջնորդի անձ-
նավոր, աստուծոյ արդարութիւնն դա-
տարկ կը լինէր։ և մարդոյ պէս դա-
տելով աստուածութեան մին յատ-
կութիւնն մէկէլ յատկութեանն կը-
յաղթէր և նորա վերայ կը պարծե-
նար։ Դ. Այց Հիսուսի Քրիստոսի խա-
չովն Աստուծոյ ողորմութիւնն և
արդարութիւնն հաւասարապէս փա-

ուսուցված են որ աստուծոյն ոչ մէ-
նակ ամէնատղորմած, բայց էլ ամէնից
արդար ենք խմանում։ Սրա համար
էս աստուածային հնարքով Աստու-
ծոյ անսահման իմաստութիւնն փառ-
քով յայտնըված տեսնում ենք։

Պօղոս առաքեալն ասում է. թէ
Աստուած Յիսուսին առաջ դրաւ՝
քաւութիւն լինելոյ համար նորա
արիւնովն հաւատքի ձեռովն. և ա-
պա յատուկ պատճառն էն է ասում։
որ նա իրան արդարութիւնն ցոյց տայ.
այսինքն՝ էն վրէժ խնդրող արդա-
րութիւնը՝ որ նորա էութիւնն և
գլխաւոր գործն էն է. որ մեղքին
պատժէ։ (Հռ. գ։) Այդպէս ամե-
նասուրբ աստուած իրան ցոյց է տա-
լիս. որ իսպառ և առանց փոխվելոյ
արդար է, հենց էն ժամանակին էլ
երբ որ արդարացնում էն մեղաւո-
րին, որ հաւատում Քրիստոսին։
Այսպէսի ողորմութեան գործքով նա
իրան աստուածային օրէնքի պատիւը
և զօրութիւնը կատարելապէս հաս
տատում մեղաց համար իրան ան-

սահման առելութիւնը յայտնումէ, և
հետց ամէնից սաստիկ վախով գար-
կումէ ամէն անհոգ և մեղքի մէջ
մնացող մեղաւորին. դեռ քանի որ
շատ ուրախացնող յուսոյ պինդ հիմքն
դնումէ ամէն ապաշխարող և յետ
դառնող մեղաւորին համար։ Այն
չարչարանքն և տանջանքն որ դը-
ժոխքի մէջն դատապարտված հոգիքն
քաշումեն՝ աստուծոյ սրբութիւնը
և արդարութիւնը էնքան չեն ցոյց
տալիս մեզ որքան որ նորա սիրելի
որդոց խաչելութիւնն։ Եթէ աստ-
ուած չըխնայեց որդոյն, որ նորան-
ում մեղք չըգտվաւ, բայց միայն
օտար մեղքն նորան համարվեցաւ,
ապա որքան էլ աւելի պատիժ կըտայ
էն մեղաւորին, որ նորա դէմ խոս
տացած և քարոզած սրտով մեղքի և
ապստամբութեան մէջն մնումէ։ Ա-
կի մին բան էնքան ցոյց է տալիս
մեղքի գարշելի կեղտոտութիւնը
և ահաւոր ծանրութիւնը. որ ա-
տելի է աստուծոյ առաջին. էլ իս-
կի մին բան էնքան ահուվախ է տա-

լիս անիրաւութիւն գործողներին, որ քան որ կեանքի իշխան Յիսուսի Քրիստոսի դառն և անիծեալ մահն, որ մեզ համար խաչի վերայ քաշեց։

Աստուծոյ սէրն, շնորհքն, և ողորմութիւնն շատ մեծ և պայծառ փառքով երևումն Յիսուսի Քրիստոսի խաչոնին թողութեան, կեանքի և անվերջ երանութեան պարգևն որ կերպով որ դատապարտեալ չարագործներին տրվի։ միշտ զարմանալի է, և աստուծոյ ողորմութիւնը շատ պայծառ է ցոյց տալ։ Բայց եթէ երկնաւոր հայրն էս ամէնը տայ մեզ իրան սիրելի և միածին որդոյ խոյերի, չարչարանքների և մահի ձեռնին։ ապա նա ոչ թէ մէնակ իրան սէրը է յայտնում մեզ վերայ։ բայց էլ հենց իրան մեծ պայծառ և անպատմելի քաղցր սէրը մեր առաջին է դնում և էնպէս է յայտնում; որ գոհութենով մեր սրտերը վառէ, և յաւիտենական զարմանքով մեր հոգիներս լցնէ։ Նա

յայտնումէ նորան էն իրան ամէն կատարելութեանցմէ։ Փրկութեան շնորհքն որ ինքն իրանով ամէնից պատուական է, անասելի բարձր և գերազանց է լինում էն կերպովն որ նորանով տրվվում մեզ։ Ն.ստուած աշխարհքին էնքան շատ սիրեց, որ ոչ մարդ և ոչ հրեշտակ՝ բայց մէնակ ինքն է կարող խմանալ և հասկանալ։ Ն.ստուած աշխարհքին էնպէս սիրեց մինչև որ իրան միածին որդին չարչարանաց և մահուան մէջ և էլ խաչի մահուան մէջ տուաւ. որ ամէն ով նորան հաւատայ՝ չըկորչի, բայց յաւիտենական կեանքըն ընդունի։ Ի՞նչքն առաջ թագաւորութիւն էր անում և մահով քանդումէր մեզ, բայց հիմիկ աստուծոյ ազատ և անսահման շնորհքն Յիսուսի Քրիստոսի արդարութեանովն թագաւորութիւն է անում հոգոր զորութեանով և փառքով, որ մեզ յաւիտենական կեանքի մէջ տանի։

Եթէ հազար աշխարհքներ էլ ընծայ տրվվին մեզ, ամէն էլ ոչինչ

էր՝ էն շնորհքին մոխիկ տալով որ աստուծոյ որդոյ մահովն ցոյց տըվվաւ մեզ։ Կորանում մենք Ճշմարիտ սէրն ենք տեսնում։ Որ մին խօսքով ասեմ։ Թէ որ մենք Տէր աստուծոյ ահաւոր և պաշտելի անուանն ամէնից գեղեցիկ կերպարանքով գրած և քաշած կամենանք տեսնել, Թէ որ նորա բոլոր աստուածային յատկութիւններն կամենանք իրանց ամէնից պայծառ փառքովն էլ տեսնել. ապա պէտք է որ մեր միտքն փրկչի խաչին վերայ դարձնենք։

Ը.

Յիսուսի քրիստոսի խաչ շատ մեծ և զօրաւոր յորդորմունք է սրբութեանն հետևելոյ համար էն փրկութեան վարդապետութիւնն որ փրկչի մահովն կատարվեցաւ. խակի մին կողմանէ չի տկարացնում էն վարդապետութիւնը՝ որ բարեգործութեան համար խօսում է և յորդորում։ Էն առաքինութիւններն, որ մենք սովորումենք սուրբ գրքերից,

հաստատված են աւետարանի կանոնին վերայ. և էն սիրտ վառօղ սիրուցն են դուրս գալ իսկ, որ հաւատացեալն իրան մեռած փրկչին վերայ ունի։ Լակի մին բան կարօղ չէ էնպէս զօրութեանով յորդորել մեզ դէպի բարի գործքերն. ինչպէս որ Յիսուսի Խրիստոսի սէրն, որ մեզ համար մեռաւ։ Ով որ Խրիստոսի մահըն հաճատքով միտք է առնում, նորա սրտումն շնորհակալութիւն և սէր է ծնվում, որ ամէն փիլիսոփաների ճարտար և գեղեցիկ խօսքերից ըն և յորդորմունքներից շատ աւելի զօրաւոր է՝ որ մեզ զարթեցնէ և սրբութեան հետևելոց և մեզ-քից յետ քաշվելոց համար ջերմեռանդ անէ։

Մենք չենք ասում, թէ խրատներն և յորդորմունքներն առաքինութեանն և բարեգործութեանն հետևելոց համար՝ անարգելի կամ անպետք են լինում էն վարդապետութեանցն, որ նորան մենք էստեղ յիշեցինք կամ թէ հարկաւոր չէ

Յիսուս Քրիստոսին հետևողներին ավելցնել և զգուշացնել խրատել և յորդորել իրանց վարքին համար։ բայց մինակ էն ենք ասում, թէ փրկչի սէրն և շնորհքն՝ որ նորա մեզ համար մեռնելովն յայտնվեցաւ, ամենից զօրեղ շարժումնք են սրբութեանն հետևելոց համար։ Աստուծոյ փրկութիւն առաջ շնորհքն երևեցաւ ամէն մարդկանց՝ որ էլ խրատում մեզ՝ որ ուրանանք ամբարշտութիւնքն և աշխարհական ցանկութիւններին, և պարկեշտութենով և արդարութենով և աստուածապաշտութենով ապրինք էս աշխարհքումը։ (Տիտ. Բ. 11. 12։) Ինչ է շարժում մեզ՝ որ մեր փրկիչն անկեղծ սիրով և ձշմարտութենով սիրենք. էն որ նա առաջ մեզ սիրեց։ Ինչ է շարժում մեզ՝ որ ձշմարտութենով մեզ քիչն ապաշխարենք և զղջանանք։ Էն որ մեզ համար չարչարված փրկչի խոցերին մոտիկ ենք տալիս։ Ոչի մին բան կարող չէ մեր քարացած սիրտը էնպէս

ձմռել և կակղացնել և աւետարա-
նական զղջութեամբ և տրտմութե-
նով լցնել։ ինչպէս որ մեր մեռած
փրկչի վերայ մտիկ տալ։ որ մեր
մեղքերին համար խոցվեցաւ, և մեր
անօրէնութիւններին համար չարչար-
վեցաւ։ Եւ ինչ հարօղ է շարժիլ
մեզ որ կատարեալ մտքով ամէն ծուռ
ճանապարհ թողենք և աշխարհական
ունայն ուրախութիւններից և ցան-
կութիւններից յետ դառնանք։ Լա-
կի մին հնար էնքան զօրաւոր չէ որ
մեր սրտերըն հեռացնէ էն մեղքից
և ցանկութիւններից որ մենք առա-
ջուց խապառ կապված էինք նորանց
հետ, և մեր սրտերըս յետ քաշէ ա-
մէն չարուն ճանապարհներից, ինչ-
պէս որ էն հաւատքն, թէ Քրիստոս
մեռաւ մեզ համար։ որ մենք մեզ քի-
ցըն ազատված արդարութեամբ ապ-
րինք։ Ինչ կարօղ է շատ զորու-
թեամբ զարթնացնիլ մեզ, սիրոյ ո-
ղորմութեան և երկայնութեան հե-
տևելոյ համար, եթէ ոչ մեր փրկիչ
Աստուծոյ քաղցրութիւնն և սէրն

որ մեզ վերայ յայտնեց։ Պօղոս առաքեալն ասումէ. սիրով գնացէք, ինչպէս որ Քրիստոս էլ սիրեց մեզ, և իրան անձին մեզ համար մատնեց։ (Էֆես. Ե. 2։) Նէ երբ որ յորդորումէ մեզ՝ էն սէրըն և բարեգործութիւնը ցոյց տալոյ համար որ ընտանեաց վերայ է. հենց էնպէս էլ ասումէ. թէ ինչպէս որ եկեղեցին հնազանդ է Լինում Քրիստոսին. էնպէս էլ կանայքըն իրանց մարդկանցն ամէն բանի մէջ։ Նէ մին էլ մարդիք՝ սիրեցէք ձեր կանանցըն. ինչպէս որ Քրիստոսն էլ սիրեց եկեղեցին. և իրան անձին մատնեց նորա համար։ (Էֆես. Ե։) Նէ երբ որ առաքեալներն յորդորումեն մեզ՝ որ խոպառ աստուծոյն տանք մեր անձներըս. նորանք ասումեն մեզ, դուք ձեր անձին տէր չէք. պատճառն որ՝ մեծ գին տալով գնվեցաք. և սրա համար պէտք է որ աստուծոյն փառք տաք ձեր մարմնումն և հոգումն, և ոչ թէ ձեր անձներին համար կենդանի Լինիք, այլ նրա համար, որ ձեզ հա-

մաբ մեռաւ և յարութիւն առաւ։ (Ա. Կորն. Զ. 20։ Բ. Կորն. Ե. 15։)

Սրա համար Քրիստոսի խաչն Աշմարիտ սրբութեան աղբիւրն է, և դէպի ամէն առաքինութիւններն շարժուում։ Յիսուս Քրիստոս մեռաւ որ մեզ ամէն անիրաւութենից փրկէ, սրբելով իրան համար յատուկ ժողովուրդ շինէ և ամէն բարի գործքերին համար ջերմեռանդ անէ։ (Տիտ. Բ։) Ինչ են մարդկանց ամէն Ճարտար խրատներն, եթէ նորանց էն մեր Տէրի զարմանալի սիրոյ հետ համեմատենք. որ մեզ համար մեռաւ։ Նա սէրս կանչում մեզ և զարթնացնում մեզ և միշտ յորդորում մեզ, որ ամէն փորձութեան մէջն սրբութեանն հետևինք և ամէն բանի մէջ մեր փրկիչ աստուծոյ վարդապետութիւնն զարդարենք և փառաւորենք թող նորա սէրն պինտ հաստատուի մեր սրտերումն. թող միշտ աստուծոյ որդոյ հաւատքովն ապրինք՝ որ սիրեց մեզ, և իրան անձն մեզ համար տուաւ՝ որ մենք էլ սիրենք նորան և

սիրով և գոհութիւնով միշտ հնազանդ լինինք նորան։ Ուրեմն գեռ քանի որ էս աշխարհքումն լինինք. թող պօշտա առաքելոյն հետ մէնակ Յիսուսի խաչին պարծենանք, և իսկի մին ժամանակ նորանից չի ամաչենք։ Թող իմաստունն իրան իմաստութիւնովն պարծենայ, հզօրն իրան զօրութիւնովն, մեծատունն իրան հարստութիւնովն, բայց մենք մէնակ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խաչովն պարծենանք. որ նորանով աշխարհքն խաչված է մեզ համար և մենք աշխարհքին համար։

Բայց հիմիկ ով իմանա միտքդ ու էն որ հենց հիմիկ կարդացել եաւ

Քրիստոս մարդկանց համար պատարագ էլաւ որ մարդկանց տեղն աստուածային արդարութեան իրաւունքն լցնէ և կատարէ։ Այ էլ մեր մեծ քահանայապետ է. ինչու որ հենց իրան անձին պատարագ տուաւ որ աստուծոյ արդարութիւնովն և օրէնքովն հատատված պահանջին քա-

շէ. և սրանով մեր քաւութեան և հաշտութեան քահանայ էլաւ։ Օ՜հ քանի՞ զարմանալի է էս հնարքս. քանի՞ անպատմելի է էս սէրս։ Օ՜հ. քանի՞ պէտք է մեզ մեղաւորացս, որ խոնարհութենով և զարմանքով մտիկ անենք էս շնորհայ լիութեանն։ Ա՜հա աստուծոյ որդին. տեսնումեմ նորան որ իրան փառաց բարձրութենէն վէր է գալիս. որ ինձ նման մարդ լինի. մարմնով և տրտմութենով պատած. տեսնումեմ հօր միածին և սիրելի որդոյն որ հօր ծոցն և երկնաւոր ուրախութեանց լիութիւնն թողումէ՝ որ մեր տկար բնութիւնն իրան վերայ առնէ և էն նեղութիւններն և սաստիկ ցաւերն քաշէ. որ մենք նորանց արժանի էլանք մեր մեղքերովս. տեսնումեմ նորան հօրէն թողված և էն աստուածային բարկութեան ահաւոր և անպատմելի ծանրութեան տակն ընկած. որ մեր մեղաց համար մեզ վերայ պէտք էր գայ. տեսնումեմ աստուծոյ որդոյն հոգով տրտմած. հա՛.

մինչև 'ի մահ տրտմած։ Ո՛վ իմ փրկիչ։ մի թէ էս ամէն ցաւերին դու հաղթեցիր իմ մեղացս համար մի թէ էս ամէն դառն չարչարանքներըս քաշեցիր, որ ինձ նման ապստամբված մեղաւոր մարդ հաշտվի և ապրի։ Հա։ ամէնն հենց իմ մեղացս համար էլաւ։ եթէ ես անկեղծ սրտով ատումց որդոյն հաւատամ և նորանում մնամ։

Այդպա քնքիր քեզ ո՛վ իմ անձս հաւատումես դու ատումց որդի Քրիստոսին։ մի թէ իմացար քո մեղաց ծանրութիւնը և էն յաւիտենական մահը, որ նորան արժանի ես էլել։ Այ թէ վաստակված և բեռնաւոր էլար դու քո անցկացած անօրէնութիւններըն իմանալուն։ մի թէ սրտով տրտմած ես էն մեղայ ղօրութեան համար՝ որ քեզ ճնում է ընակվում։ մի թէ փրկվելոյ համար փախիր և դարձար էն յուսոյ մօտն, որ աւետարանի մէջն քո առաջը դրած կայ։ մի թէ Յիսուս Քրիստոսին ուրախութեանով ընդունեցի՞ր։ և

նորա արիւնին հաւատացիր կենդանի հաւատքով։ Որ թէ յանձնեցիր քեզ նորան. որ ազատել իւ մեղքի իշխանութենից և նորա դատապարտութենից։ Եթէ էապէս է՝ ապա կարելի է որ էն օրհնեալ Աստուածոյ հետ հաւատքով ասես. թէ նա ինձ սիրեց և իրան տնձրն ինձ համար մատնեց։ (Գաղատ. Բ. 20։)

Ինչ մին էլ իմ սիրելի փրկչի տրամութիւնները և չարչարանքները միտքս առնեմ. էն անասնոյն տրամութիւնները և չարչարանքները. որ մարդոյ լեզուն խօսել կարող չէ պատմել։ Որ թէ իմ սիրտս կարող է էն պատմութիւնը լսել առանց խոպառ հալվելոյ։ Որ թէ իսկի ուղղամտութիւն չըկայ ինձանում, որ էապէսի չարչարանքի և էապէսի սիրոյ պատմութիւնը լսելով ես խոպառ տրամութենով չեմ շարժում։ Ով օրհնեալ Յիսուս, կոտրիր իմ սրտի քարը. որ ապաշխարութեան և անկեղծ գոհութեան գետեր դուրս բղխին։ Նա մեռած էի. և ահա աս-

աստծոյ. որդին իրան անձըն մահի մէջ մատնեց՝ որ ինձ մին էլ կենդանացնէ։ Ես աստուածանից ապըստամբված թշնամի էի. և նա ամենակարող աստուծոյ դեռաբին համբերեց. ոչ ինձ ելրան հօր հետ հաշտացնէ և նորա անսահման բարկուին ինձանից հեռացնէ։ Իմ մեծ քահանայապետս հեռց իրան անձըն ինձ համար պատարագ տուաւ,,որ իմ մեղքս թողվի և յաւիտեան խաղաղ ջնջվի։ Ինչ արա ով իմ անձս, հնարք գըտնիր և ասա. ինչ բան կըտաս Ցերին էն իրան զարմանալի և անպատմելի սիրոյն հյամար։ Ինչպէս ցոց կըտաս որ նորա քաւութիւնըն անգին ես համարում քեզ համար։ Ով ինչ է խնդրում քեզանից, եթէ ոչ էն. որ սուրբ և յատակ պահես էն շորերն, որ նա իրան պատուական արիւնովն լուացել է։ Այդպա մին էլ յաժար մըտօք ես մեղք գործեմ։ մին էլ իմ հին պղծութեանն մէջ յետ դառնամ։ և մին էլ յաժար կամքով աստուծոյ օրէնքըն քանդեմ։ Ազ՞ որ իմ սի-

ելի փրկիչ աստուծոյ մահի մէջն մեղքի ահաւոր բնութիւնը և դառը և սարսափելի պատուղները եմ տեսել և իմացել Այսպէս ինչ անեմ որ մինչ մեղք չգործեմ։ Ով Տէր. ես չեմ կարող իմ անձս պահպանել էն մահաբեր ապականութենից. դեռ քանի ր ես աշխարհքումս եմ որտեղ որ մեղքն իմ չորս կողմումս տիրապետութիւն է անում և անօրէնութիւնն պատմում է ինձ. դեռ քանի որ մարմնոյն և արիւնին հետ կապած եմ, որ նորանց միջի յիմարութիւնն և մեղքն իմ սրտիս ամէն զօրութիւնը ապականում է։ Ով Յիսուս՝ ես հիմիկ նոր ինձ յանձնում եմ քո հոգաբարձութեանն և կառավարութեանն. ինչու որ՝ դու կամենում ես փրկել էն հոգին՝ որ շատ մեծ գին տալով գընեցիր և ազատեցիր. դու կամենում ես ընդունել և ապրեցնել էն զղջացող մեղաւորին. որ քեզ մօտ եկ է դառնում Այնպէս իմ կեանքս և իմ անձս իմ մարմինս և իմ հոգիս և իմ ամէն կարողութիւններս հիմիկ ընծայու-

մեմ քո հնազանդութեանն. որ միանակ
քո փառացդ ծառայեմ յաւիտեանս
յաւիտենից։ Եւ հոգիս քեզ վերայ է
նայում խոնարհ հաւատքով. և իմ
յոյսս հաստատեալ է քո յաւիտենա-
կան սիրոյն վերայ. Ամէն։

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

247